Արգելոցը միակ վայրն է Հայաստանում, ուր անտառի վերին սահմանի մոտ պահպանվել են բոխու պուրակային անտառները:

Անտառային գոտուց վեր, սկսած 2200 մ բարձրությունից, տարածվում է բարձր լեռնային ենթալպյան մարգագետնային բուսականությունը: Անցումային գոտում շատ են տրագականտային գազերի խեժաբեր տեսակները, եղջյուրավոր կորնգանը եւ ոզնաթուփը: Դրանց շատ խիտ ճյուղավորված փշոտ բարձիկները ծաղկելիս ծածկվում են դեղին, մանուշակագույն, նուրբ վարդագույն ծաղիկներով:

2400 մ-ից մինչեւ 2600 մ բարձրություններում գերակշռում են մերձալպյան կորաբուն անտառները, որտեղ մացառային կաղնու հետ միասին աճում են նաեւ կեչին, արոսենին, բարձրլեռնային թխկին, տեղ-տեղ փռված գիհին:

Արգելոցի կենդանական աշխարհը վատ է ուսումնասիրված: Հայտնի է, որ արգելոցում բնակվում են սողուններ՝ գյուրզա, ջրային եւ սովորական լորտու, դեղնափորիկ, հայկական իժ եւ այլն, թռչուններ՝ կասպիական հնդկահավ, մորուքավոր արծիվ, անգղի տարբեր տեսակներ եւ այլն, եւ կաթնասունների բազմաթիվ տեսակներ՝ գայլ, աղվես, կովկասյան անտառակատու, այծյամ, նապաստակ, գորշուկ եւ այլն: Հանդիպում է բեզոարյան այծը: Տեղական բնակչության վկայությամբ, արգելոցում բնակվում է նաեւ առաջավորասիական ընձառյուծը: Կրծողներից հանդիպում է լեռնաբնակ բուսակեր հնդկական մացառախոզը: Նշված կենդանիների մեծ մասը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:

Եվրոպական լուսան
Lynx lynx

Հնդկական մացառախոզ
Hystrix indica

Լուսանկարները՝ Ի.Խորոզյանի, Ա.Մալխասյանի եւ Մ.Բոյաջյանի

Առաջավորասիական ընձառյուց, հովազ - Panthera pardus ciscau casica
Լուսանկարը՝ Ի.Խորոզյանի, Ա.Մալխասյանի եւ Մ.Բոյաջյանի

Սույն հրատարակությունը իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի» ՀԿ կողմից Նորվեգիայի Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) ֆինանսական աջակցությամբ:

Սպիտակագլուխ անգղ - Gyps fulvus
http://www.surfbirds.com

Բեզոարյան այծ
Capra Aegagrus

Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի ՀԿ
www.awhhe.am

Հայաստանի արգելոցներ

Շիկահող

AWHHE

375019, ՀՀ, ք. Երեւան
Բաղրամյան պող. 24դ,
սենյակ 609

Հեռ. (+374-1)-52 36 04
office@awhhe.am
www.awhhe.am

Ճիկահողի տեսարան
Լուսանկարը՝ Ն.Մամիխանյանի

Ճիկահողի արգելոց

- Հիմնադրումը՝ 1958 թ.
- Տարածքը՝ 12 137 հա
- Տեղադրությունը՝ Սյունիքի մարզ
- Նպատակը՝ կաղնու, բոխու, կաղնուտաբոխուտային անտառների, արեւելյան հաճարենու, հատապտղային կենու, արեւելյան սոսու եւ կենդանիների պահպանություն:

Արգելոցը գտնվում է ծովի մակերեւույթից 700 - 3256մ բարձրության վրա, Խուստուփի լեռնազանգվածի հարավային եւ Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Նրա տարածքով հոսում են Ծավ եւ Ճիկահող գետերն իրենց լեռնային վտակներով: Արգելոցի բնության հուշարձաններից են՝ Մթնաձորը, գեղեցկատես ժայռերը եւ քարանձավները:

Արգելոցի բուսաշխարհին ընդգրկում է 1074 տեսակ ծաղկավոր բույս: Արգելոցում աճող մոտ 70 տեսակ գրանցված է Հայաստանի, իսկ 18-ը՝ նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Արգելոցում աճում են էնդեմիկ շատ տեսակներ, որոնցից շատերը կոչվում են Զանգեզուր տեղանունով, օրինակ՝ տանձենի Զանգեզուրի, զանգակածաղիկ Զանգեզուրի, շնկոտեմ Զանգեզուրի, մորենի Թախտաջյանի, վարդակակաչ խճճված, Ստեւենի եւ հայկական

Տանձենի - Pyrus spp.
http://www.botanypictures.com

սղնիներ եւ այլն:

Արգելոցում աճում են հազվագյուտ ռելիկտային պտերներ՝ իժալեզու սովորական, արծվապտեր ղրիմյան, ձնծաղիկ անդրկովկասյան, խոլորձի, հիրիկի, կակաչի, շնդեղի, խլոպուզի տարբեր տեսակներ:

Արգելոցի բուսականության հիմնական տիպը՝ անտառը, տարածվում է 1000 - 2200 մ բարձրությունների վրա եւ կազմված է վրացական ու խոշորառէջ կաղնու, սովորական ու արեւելյան բոխու տեսակներից: Որպես ուղեկցող տեսակներ հանդես են գալիս հացենին, լորենին, թխկին, թեղին /ծփի/:

Դրախտածառ սովորական - Cotinus coggygria
http://flora.nhm-wien.ac.at



Թզենի - Ficus carica L.
http://www.botanypictures.com

Նռնենի - Punica granatum L.
http://davesgarden.com

Բոխուտները տարածվում են հյուսիսային դիրքադրության լեռնալանջերին: Արգելոցում գտնվում է արեւելյան հաճարենու՝ Հարավային Հայաստանում միակ անտառակը:Անտառներում շատ են վայրի պտղատուները՝ հունական ընկուզենին, տանձենին, արեւելյան խնձորենին, սալորենին, ինչպես նաեւ մի շարք ջերմախոնավասեր ծառաթփային տեսակներ՝ բթատերեւ պիստակենին, ցանովի շագանակենին, կովկասյան խուրման, բոխատերեւ զելկովան, սովորական նռնենին, սովորական զկեռը, թզենին եւ այլն:

Հիրիկ գայլի - Iris lycotis
Լուսանկարը է.Գաբրիելյանի

Փոքրիկ ծառախմբերի կամ առանձին ծառերի տեսքով աճում է նաեւ հատապտղային կենին: Ճիկահող գյուղի մոտ, հաճարենու մութ ու խոնավ անտառի խորքում գտնվող կենու ծառախումբը կազմված է երիտասարդ, 25-30 տարեկան ծառերից: Արգելոցի տարածքում հատուկենտ առանձնյակներով կամ խումբ-խումբ հանդիպում է արեւելյան սոսին:

Արգելոցի ստորին լեռնային գոտում, մինչեւ 1000 մ բարձրությունը, տարածվում են արաքսյան կաղնու ցածրահասակ ծառուտները եւ միջերկրածովյան բուսականության շատ հետաքրքիր մի տիպ՝ շիբլյակը: Վերջինիս ուղեկցում են սովորական դրախտածառը, մերկ փռշնին, սովորական ծորենին /կծոխուր/ եւ այլ չորակայուն թփեր եւ նույնքան էլ չորակայուն շիբլյակին հատուկ խոտածածկ, ուր գերակշռում է սովորական միրուսաբույսը /կծմախոտ/՝ իր բարձր, ընդհանուր հասակոթի վրա մատնաձեւ տարածված, երկար թելանման հասկերով:

Այծյամ - Capreolus capreolus
Լուսանկարը՝ Ի.Խորոզյանի,
Ա.Մալխասյանի եւ Մ.Բոյաջյանի